

**Աշխարհագրություն առարկայի հանրապետական օլիմպիադա - 2019-2020թթ.  
Դպրոցական փուլ /տևությունը – 90 րոպե/**

**10 – րդ դասարան  
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

- 1. Ժամային գոտիները սահմանազատվում են.**
  1. գուգահեռականներով
  2. միջօրեականներով
  3. արևադարձերով
  4. բևեռային շրջագծերով
  
- 2. Նյութական ոլորտի ճյուղ է.**
  1. սննդի արդյունաբերությունը
  2. առողջապահությունը
  3. գիտությունը
  4. բանկային համակարգը
  
- 3. Խաղաղ օվկիանոսի սառը հոսանքներից են.**
  1. Կանարյան և Արևմտա-Ավստրալական
  2. Լաբրադորյան և Պերուական
  3. Կալիֆոռնիական և Օյասիո
  4. Ֆոլկլենդյան և Սոմալիի
  
- 4. «Մշակաբույս-առաջատար երկիր» գույգերից ընտրել սխալը.**
  1. սուրճ-Եթովպիա
  2. եգիպտացորեն-ԱՄՆ
  3. վուշ-Ռուսաստան
  4. կաուչուկատու հեռա-Մալայզիա
  
- 5. Հին քայքայված լեռնաշղթաներ են.**
  1. Ալպերը և Սկանդինավյանը
  2. Դրակոնյանը և Մեծ Կովկասը
  3. Անդերը և Մեծ Զրբաժանը
  4. Ապալաչները և Ուրալյանը
  
- 6. «Լեզվաընտանիք-ժողովուրդ» գույգերից ընտրել ճիշտը.**
  1. հնդեվրոպական-վրացի
  2. չին-տիբեթական-մոնղոլ
  3. սեմաքամյան-արաբ
  4. ուրալյան-թուրք
  
- 7. Որևէ տարածքի տեղումների տարեկան քանակը կախված չէ .**
  1. ծովային հոսանքներից,
  2. օվկիանոսների և ծովերի նկատմամբ ունեցած հեռավորությունից,
  3. գերիշխող քամիներից,
  4. բնական զոնայի տիպից:
  
- 8. Ընտրել պետությունների ճիշտ շարքն՝ ըստ տարածքի մեծության նվազման հաջորդականության.**
  1. Ռուսաստան, Չինաստան, Հնդկաստան, ԱՄՆ,
  2. Բրազիլիա, Թուրքիա, Իրան, Ֆրանսիա,
  3. Կանադա, Չինաստան, Ավստրալիա, Ղազախստան,
  4. Հնդկաստան, Ինդոնեզիա, Ճապոնիա, Սաուդյան Արաբիա
  
- 9. Հարավային կիսագնդի տափաստանային զոնայում n՞ ր ամսին կարող է ցոյ առաջանալ.**
  1. փետրվարին
  2. օգոստոսին
  3. հունիսին
  4. նոյեմբերին
  
- 10. Արաքսի վտակներից չէ.**
  1. Մակուն
  2. Մեծամորը
  3. Թարթարը
  4. Ախուրյանը

**11. Տավուշի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

1. հարուստ է հանքային աղբյուրներով,
2. հարուստ է բենթոնիտային կավի պաշարներով,
3. կան գորշ ածխի պաշարներ,
4. հարուստ է մետաղային օգտակար հանածոներով:

**12. Արևմտյան Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1. Գերմանիան և Ֆրանսիան դաշնային պետություններ են,
2. Ժողովուրդների մեծ մասը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի սլավոնական լեզվախմբին,
3. փոքր է բնակչության միջին խտությունը,
4. ցածր է բնակչության բնական աճը:

**13. Տրվածներից ո՞րը էրոզիայի առաջացման պատճառ չէ.**

1. անտառային տարածքների կրճատումը,
2. արոտավայրերի գերարածեցումը,
3. խախտված հողերի վերականգնումը,
4. գետերի վարարումը:

**14. Արցախի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

1. պտղաբուծությունն առավել զարգացած է Մարտունու շրջանում,
2. թզենին և նոնենին լավ հարմարվել են ցածրադիր շրջաններում,
3. խաղողագործությունն առավել զարգացած է նախալեռնային գոտում,
4. տեխնիկական մշակաբույսերից առավել տարածված է շաքարի ճակնդեղը:

**15. Ջրօգտագործողներ են.**

- |                        |                                      |
|------------------------|--------------------------------------|
| 1. արդյունաբերությունը | 2. ջրային տրանսպորտը                 |
| 3. գյուղատնտեսությունը | 4. կոմունալ-կենցաղային տնտեսությունը |

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

16. Գետի լայնությունը 12 մետր է, միջին խորությունը՝ 80 սմ, իսկ ջրի արագությունը՝ 5մ/վրկ: Որոշել գետի ծախսը (մ<sup>3</sup>/վրկ):

17. Ո՞րքան է 40 տոննա նավթին համարժեք պայմանական վառելիքի քանակը (տոննա), եթե նրա ջերմային գործակիցը 1,5 է:

18. Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս.լ. 48°30' և արլ.ե. 60°30': Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյան աստիճանային չափը հունիսի 22-ի կեսօրին:

19. Ո՞րքան է երկրի ուրբանիզացման մակարդակը (%), եթե նրա բնակչության թիվը 16 մլն է, իսկ գյուղական բնակչության թիվը՝ 4 մլն մարդ:

20. Երկրի գյուղատնտեսական հողահանդակների ընդհանուր մակերեսը 15 մլն հեկտար է, իսկ բնակչության 1 շնչին բաժին է ընկնում 3 հեկտար: Որոշել երկրի բնակչության թիվը (մլն. մարդ):